ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

23 հոկտեմբեր 2016 թ. № 35 - Ա/1

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄԱՐԶԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «գ» և «ժ.1» կետերի՝ *հրամայում եմ*՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության մարզերում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2016 թվականին անցկացվելիք մարզական փառատոնի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետում նշված փառատոնն իրականացվում է «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի № 1 հավելվածի № 1 աղյուսակի 08 բաժնի 01 խմբի 01 դասի «06. ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում» ծրագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Խաչիկ Ասրյանին:

Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարի
2016 թվականի փետրվարի 23 -ի
№ 35 -Ա/1 հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄԱՐԶԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻ

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության մարզերում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (այսուհետ՝ ԼՂՀ) 2016 թվականին անցկացվելիք մարզական փառատոնի (այսուհետ՝ Փառատոն) նպատակներն են՝

1) ֆիզկուլտուրայի և սպորտի մասսայականացում Հայաստանի Հանրապետության մարզերում և ԼՂՀ-ում.

2) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների դերի բարձրացում:

2. Փառատոնի խնդիրներն են՝

1) բնակչության շրջանում ֆիզկուլտուրայի և սպորտի քարոզչության ապահովում, առողջ ապրելակերպի արմատավորում, երիտասարդությանը մարզական խմբակներում ընդգրկում.

2) համայնքներում ֆիզկուլտուրայի օրերի անցկացման ավանդույթի վերականգնում.

3) անհատի ներդաշնակ զարգացում և աշխատունակության բարձրացում, առողջ ապրելակերպի ձևավորում:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. Փառատոնի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

4. Փառատոնի կազմակերպումն ու անցկացումը իրագործում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանները, ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունը, իսկ Փառատոնի անցկացման անմիջական պատասխանատվությունը դրվում է համապատասխան քաղաքային համայնքների և Նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի վրա:

3. ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՎԱՅՐԸ

5. Փառատոնն անցկացվելու է Հայաստանի Հանրապետության 48 քաղաքներում և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում՝ հետևյալ ժամկետներում՝

1) Կոտայքի մարզ – սեպտեմբերի 10-15-ը (ք. Հրազդան, ք. Աբովյան, ք. Չարենցավան, ք. Նոր Հաճն, ք. Ծաղկաձոր, ք. Բյուրեղավան, ք. Եղվարդ, գ. Գառնի)

2) Գեղարքունիքի մարզ – սեպտեմբերի 11-15-ը (ք. Գավառ, ք. Ճամբարակ, ք. Մարտունի, ք. Վարդենիս, ք. Սևան)

3) Տավուշի մարզ – սեպտեմբերի 13-16-ը (ք. Իջևան, ք. Դիլիջան, ք. Նոյեմբերյան, ք. Բերդ)

4) Լոռու մարզ – սեպտեմբերի 14-18-ը (ք. Վանաձոր, ք. Ալավերդի, ք. Ստեփանավան, ք. Սպիտակ, ք. Տաշիր, ք. Ախթալա, գ. Գուգարք)

5) Շիրակի մարզ – սեպտեմբերի 15-19-ը (ք. Գյումրի, ք. Արթիկ, ք. Մարալիկ, գ. Ամասիա, գ. Աշոցք, գ. Ախուրյան)

6) Արմավիրի մարզ – սեպտեմբերի 16-18-ը (ք. Արմավիր, ք. Էջմիածին, ք. Մեծամոր)

7) Արագածոտնի մարզ – սեպտեմբերի 16-18-ը (ք. Աշտարակ, ք. Ապարան, ք. Թալին)

8) Արարատի մարզ – սեպտեմբերի 17-20-ը (ք. Արտաշատ, ք. Արարատ, ք. Մասիս, ք. Վեդի)

9) Սյունիքի մարզ – սեպտեմբերի 19-23-ը (ք. Կապան, ք. Գորիս, ք. Սիսիան, ք. Քաջարան, ք. Մեղրի)

10) Վայոց ձորի մարզ – սեպտեմբերի 24-26-ը (ք. Եղեգնաձոր, ք. Վայք, ք. Ջերմուկ)

11) ԼՂՀ – սեպտեմբերի 18-21-ը (ք. Ստեփանակերտ):

6. Փառատոնը յուրաքանչյուր քաղաքում անցկացվելու է մեկ օրում:

4. ՓԱՌԱՏՈՆԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7. Փառատոնը սկսվում է բացման հանդիսավոր արարողությամբ, որին մասնակցում են քաղաքային և գյուղական համայնքների, ուսումնական հաստատությունների, մարզադպրոցների և այլ մարզական կազմակերպությունների թիմերը: Մարզադաշտի տարբեր հատվածներում ցուցադրական ելույթներով (պարանի ձգում, կշռաքարերի նետում, կարատե, բռնցքամարտ, ազգային ժողովրդական խաղեր՝ քաշոցի, գոտեմարտ, աքլորախաղ, լախտի և այլն) հանդես են գալիս մարզական և գեղարվեստական տարբեր խմբակներ:

8. Շքերթի ավարտից հետո սկսվում են Փառատոնի ծրագրով նախատեսված 7 մարզաձևերի մրցումները, որոնք կարող են անցկացվել տարբեր մարզակառույցներում:

9. Փառատոնի անցկացման կարգն ու պայմանները որոշում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանները և ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունը: Ելնելով մարզի հնարավորություններից և ավանդույթներից՝ մրցումների ծրագրի մեջ կարող են կատարվել մասնակի լրացումներ ու փոփոխություններ:

10. Հայաստանի Հանրապետության մարզպետարանները և ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունը Փառատոնի նախնական ծրագրերը, ժամանակացույցները և միջոցառման պատասխանատու անձի տվյալները ըստ քաղաքների ներկայացնում են Նախարարություն մինչև հոկտեմբերի 30-ը:

11. Փառատոնի ավարտից հետո՝ տարեվերջին, Նախարարության համապատասխան հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության մարզպետարանների և ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից ներկայացված տեսաժապավենների հիման վրա որոշում է 2016 թվականի Փառատոնում 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված քաղաքները:

12. Փառատոնի ծրագիրը և մրցումների անցկացման պայմանները

1)	Կշռաքարի բարձրացում (16 կգ, աջ կամ ձախ ձեռքով)	- Անհատական մրցումներ. կարող են մասնակցել բոլոր ցանկացողները: Վարժությունը կատարվում է ազատ ոճով, այն համարվում է կատարված, եթե կշռաքարը բարձրացվել և պահվել է գլխավերևում:
2)	Շախմատ (անհատական մրցումներ)	- Խաղի տևողությունը՝ 20 րոպե:
3)	Նարդի (երկար, անհատական մրցումներ)	- Մրցումներն անցկացվում են գործող կանոնների համաձայն, երեք խաղափուլով:
4)	Ազգային կոխ ըմբշամարտ (պատանիներ, անհատական մրցումներ)	- Մրցումներն անցկացվում են մեկ քաշային կարգով՝ համաձայն գործող կանոնների, քաշային կարգերը ընտրում են կազմակերպիչները:
5)	Բազկամարտ (աջ ձեռքով, անհատական մրցումներ)	- Մրցումներն անցկացվում են մարզաձևի գործող կանոնների համաձայն, օլիմպիական մրցակարգով:
6)	Մինի ֆուտբոլ (թիմի կազմը՝ 8 հոգի)	- Խաղերն անցկացվում են գործող կանոնների համաձայն, մինի խաղահրապարակներում, տարիքային սահմանափակում չկա, խաղի տևողությունը՝ 30 րոպե (15 + 15), 5 րոպե ընդմիջում:
7)	Մասսայական վազքարշավ (1000 մետր, անհատական մրցումներ, տղա-աղջիկ)	- Կարող են մասնակցել բոլոր ցանկացողները: Մրցումներն անցկացվում են աթլետիկայի գործող կանոնների համաձայն:

5. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

13. Փառատոնի մրցումներում առանձին մարզաձևերից 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված մարզիկները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, իսկ 1-ին տեղերը գրաված մարզիկները՝ նաև մրցանակներով: Փառատոնի արդյունքներն ամփոփվում են նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Փառատոնում ընդհանուր հաշվարկի արդյունքներով 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված քաղաքները պարգևատրում են համապատասխան կարգի հավաստագրերով ու գավաթներով:

6. ԾԱԽՍԵՐԸ

14. Փառատոնի անցկացման ծախսերը (մարզակառույցների նախապատրաստման, ռադիոհանգույցի ապահովման, մարզիկներին մրցավայր գործուղելու, մարզագույքի և հանդերձանքի ձեռքբերման, Փառատոնի տեսագրման ծախսեր) տեղերում հոգում են համապատասխան համայնքները, իսկ մրցումներում առանձին մարզաձևերից 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված մարզիկների հավաստագրերի, 1-ին տեղերը գրաված մարզիկների մրցանակների, Փառատոնում ընդհանուր հաշվարկի արդյունքներով 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված քաղաքներին տրվող գավաթների, մրցավարների և բժիշկների հետ կապված ծախսերը իրականացվում են 2016 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով ծրագրին տրամադրված գումարների հաշվին:

7. ՀԱՅՏԵՐԸ

15. Գյուղական համայնքները, ուսումնական հաստատությունները, մարզադպրոցները և մարզական կազմակերպությունները Փառատոնին մասնակցության հայտերը ներկայացնում են քաղաքապետարանների համապատասխան բաժիններ, իսկ քաղաքապետարանները Փառատոնի անցկացման ժամանակացույցը և անհրաժեշտ տեղեկատվությունը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության մարզպետարաններ: Քաղաքապետարանները անցկացված Փառատոնի արձանագրությունները, տեսաժապավենը, հաշվետվությունները՝ հաստատված քաղաքային համայնքի ղեկավարի (քաղաքապետ) կողմից, ներկայացնում են Հայաստանի Հանրապետության մարզպետարաններ:

16. Հայաստանի Հանրապետության մարզպետարանները, ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունը Փառատոնի արդյունքներն ամփոփելուց հետո 10-օրյա ժամկետում ընդհանուր հաշվետվությունները և լավագույն քաղաքի տեսաժապավենը ներկայացնում են Նախարարություն:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Վ. ԷԼՈՅԱՆ